

**Բովանդակություն**

Հավելված .....	1
Հոդված 1. Ընդհանուր դրույթներ.....	2
Հոդված 2. Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը .....	4
Հոդված 3. Կողմերի պատասխանատվությունը.....	7
Հոդված 4. Վեճերի լուծման կարգը .....	7
Հոդված 5. Համաձայնագրի գործողության ժամկետը.....	8
Հոդված 6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր).....	8
Հոդված 7. Այլ դրույթներ.....	8
Հոդված 8. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները .....	9
Հավելված 1.....	10
Հավելված 2.....	11

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան

«\_\_\_» «\_\_\_\_\_» 2011 թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և սույն համաձայնագիրը կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկը սահմանում են, որ միմյանց (այսուհետև՝ *Կողմեր*) միջև Դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարքները կնքելու են սույն համաձայնագրով սահմանված կարգով՝ պահպանելով սույն համաձայնագրի պահանջները:

**Հոդված 1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1 Սույն համաձայնագրում կիրառվող բառասկզբում մեծատառով գրված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝
  - 1.1.1. Դրամական միջոցների ներգրավման գործարք (այսուհետև՝ *Գործարք*)՝ այն գործարքը, որով Կենտրոնական բանկը Գործարքի կատարման ամսաթվին Բանկից ներգրավում է ՀՀ դրամ՝ Գործարքի մարման ամսաթվին դրանք վերադարձնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ.
  - 1.1.2. *Աճուրդ*՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարք կնքելու նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ Բանկերը ներկայացնում են Հայտեր.
  - 1.1.3. *Աճուրդի օր*՝ Աճուրդի կազմակերպման օրն է.
  - 1.1.4. *Կենտրոնական բանկ*՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.
  - 1.1.5. *Բանկ*՝ սույն համաձայնագիրը կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկ.
  - 1.1.6. *Հայտ*՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկին ներկայացված Գործարք կնքելու առաջարկ (Հավելված 1).

- 1.1.7. *Իրավասու հայտ*՝ այն Հայտը, որը ընդունվել և չի մերժվել Կենտրոնական բանկի կողմից, մասնակցություն է ունենում Աճուրդի բավարարման՝ Սահմանային տոկոսադրույքի և/կամ բավարարման ենթակա առաջարկությունների ծավալի որոշման գործընթացին.
- 1.1.8. *Գումար*՝ դրամական միջոցների այն չափը, որը Բանկը առաջարկում է ներդնել Կենտրոնական բանկում սույն համաձայնագրով սահմանված կարգով.
- 1.1.9. *Տոկոսադրույք*՝ Բանկի կողմից ներդրվող Գումարի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքի չափը (ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ).
- 1.1.10. *Առաջարկություն*՝ Հայտում նշված Գումարի և Տոկոսադրույքի եզակի համախումբ.
- 1.1.11. *Հայտի հաստատում (մասնակի հաստատում)*՝ Բանկի կողմից ներկայացված Գործարք կնքելու առաջարկը բավարարելու (մասնակի բավարարելու)՝ սույն համաձայնագրով սահմանված գործընթաց: Բանկի կողմից սույն համաձայնագրի համաձայն առաքված ցանկացած Հայտ հանդիսանում է գործարքի կնքման օֆերտա, որը պարունակում է Բանկի կողմից ներդրվող գումարի առավելագույն սահմանաքանակ: Ընդ որում, առաջարկվող ներդրվող գումար է համարվում տվյալ Հայտում նշված Առաջարկությունների գումարների հանրագումարի առավելագույն չափը, ինչպես նաև մինչև այդ առավելագույն չափը ընկած ցանկացած դրական գումար, որի առավելագույն գումարի բավարարումը համարվում է լրիվ, իսկ մինչև առավելագույն գումարը ընկած ցանկացած դրական գումարի բավարարումը համարվում է մասնակի բավարարում, ինչը (հայտի հաստատումը կամ բավարարումը) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի իմաստով համարվում է ակցեպտ:
- 1.1.12. *Հայտի մերժում*՝ Կենտրոնական բանկի ծանուցումը Բանկին՝ վերջինիս կողմից ներկայացված Գործարք կնքելու առաջարկը մերժելու՝ Իրավասու հայտի կարգավիճակ չձեռքբերելու վերաբերյալ (Հավելված 2).
- 1.1.13. *Գործարքի կնքման ամսաթիվ*՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկը հաստատում (մասնակի հաստատում) է Բանկից ստացված Հայտը.
- 1.1.14. *Գործարքի կատարման ամսաթիվ*՝ այն Բանկային օրն է, երբ պետք է իրականացվի Գործարքով ամրագրված դրամային գործառնությունները.
- 1.1.15. *Գործարքի մարման ամսաթիվ*՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկը պետք է Բանկի Կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշվին մուտքագրի ՀՀ դրամը: Գործարքի մարման ամսաթիվը ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում Գործարքի մարման ամսաթիվ է համարվում դրան հաջորդող Բանկային օրը.
- 1.1.16. *Բանկային օր*՝ օրացուցային շաբաթվա այն օրը, երբ Կենտրոնական բանկը իրականացնում է իր հաճախորդների բանկային սպասարկումը.
- 1.1.17. *Գործառնական օր*՝ Բանկային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի հաճախորդների սպասարկում.
- 1.1.18. *Սահմանային տոկոսադրույք*՝ Աճուրդի ամփոփման գործընթացում Կենտրոնական բանկի կողմից որոշվող Տոկոսադրույքի առավելագույն

չափ, որը հայտարարվում է աճուրդի արդյունքների հաղորդագրության մեջ.

- 1.1.19. Սույն համաձայնագրում կիրառվող այլ հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները և դրանց կիրառման մեխանիզմները սահմանող և կարգավորող իրավական ակտով սահմանված նշանակությունները:

Սույն համաձայնագրի կարգավորման շրջանակում ընդգրկվող (կարգավորման առարկա հանդիսացող), սակայն չկարգավորված կամ չմանրամասնեցված, կամ ոչ լիարժեք կարգավորված հարաբերությունները կարգավորվում (մանրամասնեցվում կամ հստակեցվում) են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները և դրանց կիրառման մեխանիզմները սահմանող և կարգավորող իրավական ակտով:

## **Հոդված 2. Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը**

- 2.1. Սույն համաձայնագրով նախատեսված գործառնություններն իրականացվում են բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով:
- 2.2. Կողմերի միջև դրամական միջոցներով գործառնությունները կատարվում են Կենտրոնական բանկում վարվող Կողմերի համապատասխան դրամային հաշիվներով:
- 2.3. Գործարքներ կնքելու նպատակով Հայտերի ներկայացումը, ընդունումը, մերժումը կատարվում են հետևյալ կերպ.
- 2.3.1. Բանկը Կենտրոնական բանկի Հայտարարության հիման վրա Գործարք կնքելու Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկին:
- 2.3.2. Հայտը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով:
- ա. Էլեկտրոնային եղանակով կնքվող Գործարքների համար Հայտերը ներկայացվում են «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարիության դեպքում՝ թղթային եղանակով:
- բ. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող Հայտերը կողավորվում են սույն համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված ֆայլին համապատասխան Մայքրոսոֆթ Էքսել 2003 տարբերակով (այլ կերպ ներկայացված Հայտը չի ընդունվում): Ներկայացվող ֆայլի անվանման կողմն պետք է ունենա հետևյալ տիպային կառուցվածքը առանց բացատների.

Բանկի կոդը	գծիկ	Տեսակ	կետ	հապավում
15200	-	dpa	.	xls

- գ. Կողավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

դ. Թղթային եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում Բանկը Հայտը ներկայացնում է Կենտրոնական բանկ երկու օրինակից սահմանված վերջնաժամկետից 15 (տասնհինգ) րոպե առաջ: Թղթային եղանակով ներկայացման դեպքում Հայտը ներկայացվում է Կենտրոնական բանկ երկու օրինակից, որից մեկը մնում է Կենտրոնական բանկում, իսկ մյուսը վերադարձվում է Բանկին՝ ստացման ժամանակի վերաբերյալ նշումով՝ վավերացված ստացողի ստորագրությամբ:

- 2.3.3. Կենտրոնական բանկ Հայտի ներկայացման պահ է համարվում՝  
ա. թղթային եղանակով ներկայացված Հայտի դեպքում՝ Կենտրոնական բանկի լիազորված աշխատակցին Հայտի հանձնման պահը,  
բ. էլեկտրոնային եղանակով ներկայացված Հայտի դեպքում՝ «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամը:
- 2.3.4. Բանկը Աճուրդին Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի վերաբերյալ տրված հայտարարության ժամից մինչև Հայտերի ընդունման համար սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե այլ բան սահմանված չէ սույն համաձայնագրով:
- 2.3.5. Աճուրդի նույն մասնակցից մեկից ավելի Հայտ ստանալու դեպքում ընդունվում է վերջին ներկայացված Հայտը, իսկ նախորդ ներկայացված Հայտը(երը) ուժը կորցրած է(են) ճանաչվում:
- 2.3.6. Հայտում նշվում է Գործարքի այն Գումարը(ները) և այդ Գումարին համապատասխան տոկոսադրույքը(ները) (Առաջարկություններ), որով Բանկն առաջարկում է դրամական միջոցներ ներդնել Կենտրոնական բանկում, ընդ որում՝ յուրաքանչյուր Տոկոսադրույքին պետք է համապատասխանի միայն մեկ Գումար, և յուրաքանչյուր Առաջարկության Տոկոսադրույք մնում է անփոփոխ անգամ այն դեպքում, երբ Բանկի կողմից ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից բավարարվում է մասնակի:
- 2.3.7. Յուրաքանչյուր Հայտում Բանկը կարող է առավելագույնը 10 (տասը) Առաջարկություն ներկայացնել, ընդ որում՝ երկու լրացված Առաջարկության տողերի միջև ամբողջությամբ դատարկ Առաջարկության տողեր չպետք է լինեն:
- 2.3.8. Հայտում նշված յուրաքանչյուր Առաջարկություն համարվում է որպես առանձին Գործարք կնքելու առաջարկ:
- 2.3.9. Աճուրդի, սույն համաձայնագրի 2.3.6. - 2.3.7., ինչպես նաև սույն համաձայնագրի այլ պահանջներին չբավարարող Հայտը(երը) մերժվում է(են) և չի (չեն) համարվում Իրավասու հայտեր, ինչի վերաբերյալ Կենտրոնական բանկը ծանուցում է Բանկին սույն համաձայնագրի Հավելված 2-ում սահմանված ձևի միջոցով:
- 2.3.10. Եթե Բանկը Բանկում տեղադրված աշխատանքային կայանից Հայտերն ուղարկելու հնարավորություն չունի, ապա այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկի կողմից լիազորված աշխատակիցներին և Հայտը (Հայտերը) մուտքագրում է Կենտրոնական բանկում տեղադրված հատուկ

աշխատանքային կայանից մինչև Հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը:

2.3.11. Եթե Աճուրդի օրվա մինչև Հայտերի ընդունման համար սահմանված ժամը տեխնիկաձրագրային խնդիրների պատճառով Հայտերի ստացումը և ընդունումը անհնարին է լինում, ապա աճուրդային գործընթացը դադարեցվում է և 1,5 ժամվա ընթացքում Բանկերին հայտարարվում է Աճուրդը հետաձգելու, չեղյալ համարելու և/կամ նոր Աճուրդ անցկացնելու մասին:

2.3.12. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը պարտավոր է հաստատել (մասնակի հաստատել) կամ մերժել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:

2.3.13. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին կարող է մերժել Բանկի կողմից ներկայացված Հայտը:

**2.4. Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ կերպ.**

2.4.1. Եթե Իրավասու հայտում նշված Տոկոսադրույքը փոքր է Սահմանային տոկոսադրույքից, ապա տվյալ Տոկոսադրույքով Առաջարկությունը ամբողջ գումարի չափով համարվում է բավարարված:

2.4.2. Եթե Իրավասու հայտում նշված Տոկոսադրույքը մեծ է Սահմանային տոկոսադրույքից, ապա տվյալ Տոկոսադրույքով Առաջարկությունը համարվում է չբավարարված:

2.4.3. Եթե Իրավասու հայտում նշված Տոկոսադրույքը հավասար է Սահմանային տոկոսադրույքին, ապա տվյալ Տոկոսադրույքով Առաջարկությունը մասնակի բավարարվում է Սահմանային տոկոսադրույքով բավարարված առաջարկություններին տոկոսին համապատասխան:

2.4.4. Եթե Առաջարկությունը բավարարվել կամ մասնակի է բավարարվել, ապա Գործարքը համարվում է կնքված բավարարված գումարի չափով:

2.4.5. մեկ Հայտի՝ տարբեր Առաջարկությունների արդյունքում կնքված յուրաքանչյուր Գործարք համարվում է առանձին Գործարք:

2.4.6. Գործարք կնքելիս Գումարը(ները) կլորացվում են Հայաստանի հանրապետության մեկ դրամի ճշտությամբ:

2.4.7. կնքված յուրաքանչյուր Գործարք համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մաս:

**2.5. Սույն համաձայնագրի 2.4. կետի համաձայն կնքված Գործարքների հաշվարկները կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.**

2.5.1. Կենտրոնական բանկն անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման, Գործարքի կատարման ամսաթվին կատարում է կնքված Գործարքներին համապատասխան դրամական միջոցների մուտքագրում Բանկի թղթակցային հաշվից Բանկի Հատուկ հաշվին:

2.5.2. Գործարքի մարման ամսաթվին Կենտրոնական բանկն անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման կատարում է մարվող Գործարքներին համապատասխան դրամական միջոցների մուտքագրում Բանկի թղթակցային հաշվին:

- 2.6. Գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կատարման ամսաթվին հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի մարման ամսաթիվը ներառյալ, ընդ որում՝ հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են Գործարքի մարման ամսաթվին:
- 2.7. Կենտրոնական բանկը Գործարքով ամրագրված գործառնությունները իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:
- 2.8. Կենտրոնական բանկը կարող է կատարել դրամական պարտավորությունների հաշվանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 426-րդ և 921-րդ հոդվածներով սահմանված կարգով և դեպքերում:

### **Հոդված 3. Կողմերի պարասխանարվությունը**

- 3.1. Գործարքի կատարման ամսաթվին մինչև Գործառնական օրվա ավարտը Բանկի Կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշվում կնքված Գործարքներին համապատասխան գումար առկա չլինելու դեպքում Բանկը Կենտրոնական բանկին վճարում է տուժանք՝ պակաս կատարված Գործարքների հանրագումարի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:
- 3.2. Գործարքի մարման ամսաթվին մինչև Գործառնական օրվա ավարտը Կենտրոնական բանկի կողմից Բանկի թղթակցային հաշվին մարման ենթակա Գործարքներին համապատասխան գումար չմուտքագրելու դեպքում Կենտրոնական բանկը Բանկին վճարում է տուժանք՝ պակաս մարված Գործարքների հանրագումարի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:
- 3.3. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկը կարող է իր կողմից վարվող Բանկի թղթակցային հաշիվներից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձել սույն հոդվածով նախատեսված տուժանքի գումարները, իսկ կետ 3.2.-ով նախատեսված տուժանքը՝ մուտքագրել Բանկի թղթակցային հաշվին:

### **Հոդված 4. Վեճերի լուծման կարգը**

- 4.1. Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Աշխատանքային օրվա ընթացքում:
- 4.2. Կողմերի միջև առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **Հոդված 5. Համաձայնագրի գործողության ժամկետը**

- 5.1. Սույն համաձայնագիրը կնքված է անժամկետ և ուժի մեջ է մտնում կնքման պահից:
- 5.2. Բանկին անվճարունակ, նրա բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից տվյալ Բանկը գրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքներ կնքելու իրավունքից:
- 5.3. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 6.2 կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:
- 5.4. Ցանկացած Կողմ կարող է սույն համաձայնագրից հրաժարվել՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր կերպով ծանուցելով մյուս Կողմին, եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:
- 5.5. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է գործարքի կնքումից առնվազն երկու Բանկային օր առաջ գրավոր ձևով սույն համաձայնագրի մյուս Կողմին տեղեկացնել իր հասցեի, վճարային ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի, իրավասու էլեկտրոնային հասցեների կամ այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում տեղեկացումը ստանալուց հետո երկրորդ Բանկային օրը:

### **Հոդված 6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)**

- 6.1. Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք է:
- 6.2. Հոդված 6-ի 6.1. կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից և այլ հանգամանքներ, որոնք սույն համաձայնագրի դրույթները խախտող Կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

### **Հոդված 7. Այլ դրույթներ**

- 7.1. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 (երկու) օրինակից (յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ): Երկու օրինակն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրին կցվող հավելվածները կազմում են նրա բաղկացուցիչ մասը:

- 7.2. Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված և կնքված են Կողմերի կողմից:
- 7.3. Իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում սույն համաձայնագրում, ինչպես նաև դրանց հետագա փոփոխությունները և լրացումները պարտադիր են Կողմերի համար՝ իրավական ակտի ընդունման մասին Բանկին ցանկացած եղանակով ծանուցելու օրվանից՝ առանց սույն համաձայնագրի 7.2 կետով նախատեսված կարգով համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու:

**Հոդված 8. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	Բանկի անվանում
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վ.Սարգսյանի փ., 6	Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, _____ փ.,
Հեռախոս՝	Հեռախոս՝
Ֆաքս՝	Ֆաքս՝
	Թղթակցային հաշիվ Կենտրոնական բանկում՝
	Հատուկ հաշիվ Կենտրոնական բանկում՝
Իրավասու էլեկտրոնային հասցե՝ 1.	Իրավասու էլեկտրոնային հասցե՝ 1. 2. 3.
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____	Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝ _____
«__» «_____» 2011 թ.	«__» «_____» 2011 թ.

**Հավելված 1**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ  
ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ  
ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ**

<b>ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ</b>	
ՀԱՅՏ N	

Համաձայնագրի N	
Բանկի կոդ	
Բանկի անվանում	
Աճուրդի համար	

<b>Առաջարկություններ</b>		
<b>N</b>	<b>Գումար</b>	<b>Տոկոսադրույք</b>
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝	

Կ.Տ.

**Հավելված 2**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱՄԱՆ  
ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱՄԱՆ  
ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ  
ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ

Համաձայնագրի N	
Բանկի կոդ	
Բանկի անվանում	
Աճուրդի համար	
Հայտի N	

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝	
Ա. Զավադյան	

Կ.Տ.